


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
NATIONAL ACADEMY OF SCIENCES  
OF THE REPUBLIC OF ARMENIA

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ  
YEREVAN STATE UNIVERSITY

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՈՒՅՆԱԳՐԻ ՎԱՃԱՐԿԵՐԸ<sup>1</sup>  
ԵՎ ՌԱՐԱՅԻՆ ՀԵՂԱՎԿԱՐՆԵՐԸ<sup>2</sup>

ARMENIAN STUDIES TODAY  
AND DEVELOPMENT  
PERSPECTIVES

Միջազգային համաժողով  
Երևան, 15-20 սեպտեմբերի, 2003 թ.  
International Congress  
Yerevan, September 15-20, 2003



Ձեկուցումների ժողովածու  
Collection of papers



## ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻճԱԿԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Պավլիկ Չորանյան  
Հայաստան

Վրաստանի հետ Հայաստանը ունեցել է ամենասերտ ու բազմապիսի փոխհարթություններ, իսկ հայ բնակչությունը Վրաստանում՝ բազմադարյա ու անընդունակ առկայություն: Այդ պայմանավորված էր ինչպես Հայաստանի քաղաքական կամք առկայություն:

Վրաստանում հայ բնակչության կարգավիճակը պայմանավորվում և ձևավորվում էր սոցիալական հարաբերությունների մի ոլորտում, որը մեծապես տարբերվում էր Հայաստանում ու հարակից այլ երկրներում տիրող իրավիճակից<sup>1</sup>: Ենթատիրական հարաբերությունների բացարձակ գերակայությունը թելադրում-պարտադրում էր հայ բնակչությանը ընդգրկվելու հարաբերությունների այդ ոլորտ և ներկայանալու որպես վրաց թագավորի, վրաց եկեղեցու, հայոց եկեղեցու և կամ առանձին ավատատերների հպատակ-ճորտեր՝ իրականացնելով վրաց ավատատիրական իրավունքի պարտադրանքով իրենց ստանձնած բոլոր պարտականությունների կատարումը: Ենրուտիրական կապանքներից ազատ էր մոքապաքներ կոչվում էր բնակչության այն փոքր հատվածը<sup>2</sup>, որը ճեղք բերած անձնական վող քաղաքային բնակչության այն փոքր հատվածը, որը ճեղք բերած անձնական ազատությամբ առանձնանում էր իր սոցիալական ու տնտեսական դրությամբ՝ ունենալով հատուկ կարգավիճակ, ընդ որում՝ բացառապես թթիլսիի քաղաքային բնակչության մեջ:

XVIII դ. երկրորդ կեսին հայերի կարգավիճակի մասին որոշակի վկայություններ կան ինչպես վրաց իրավունքի վավերագրական սկզբնադրյուրներում<sup>3</sup>, այնպես էլ Վրաստանի օրենսդրության Ղավիթ Արքայազնի կողմից կազմված «Տեսության» հոդվածներում: Վերջինիս մեջ առավել կաշկանդիչ վերապահումներ առկա են թերևս միայն հայերի վերաբերյալ: Ըստ ազգությունների ներկայացման ժամանակ, Ղավիթ Արքայազնը, օրինակ, հայերի մասին գրում է: «[Ինոված] 117. Հայերը հիմնականում կազմում են վաճառականական դասը և գրադպում են առևտորական գործունությամբ ինչպես երկրի ներսում, այնպես էլ Վրաստանից դուրս: Նրանցից ունենությամբ ինչպես երկրի ներսում, այնպես էլ Վրաստանից դուրս: Նրանցից ունենալով հայադարձան են, իսկ մյուսները՝ կաթոլիկների: Հայերը վճարում են պետական ծառայությամբ մեջ, բացառությամբ արտակարգ դեպքերի, երբ լինում է ժամանակավոր ընդհանուր գորահավաք կամ մեկամսյա հերթապահություն, որ կոչվում է մորիգետ: Հայերը արքունական և կալվածային [ճորտեր] են»<sup>4</sup>: Ըստ 552-րդ հոդվածի

«Հայերը ոչ մի դեպքում չեն լինում մդիվանքեզ, քանզի նրանք վաճառական ժողովուրդ են»<sup>5</sup>: Նույն հիմնավորումով հայոց նկատմամբ արգելքը ընդգծվում է նաև մոռուրավների պաշտոնում հայազգի ներկայացուցիչների ընտրության համար: «Մոռուրավի պաշտոնները քաշխում է անձանմբ թագավորը» (հոդվ. 650): «Մոռուրավի պաշտոնում մշտապես ընտրվում են վրաց առաջնային իշխաններից և ազնվականներից: Հայազգի ընտանիքները, ինչ ծագման էլ նրանք լինեն, այս պաշտոնում տեղ ունենալ չեն կարող, քանզի նրանց ազգը վաղնջական ժամանակներից Վրաստանում համարվում է ոչ ավելին, քան միայն առևտորական և, ժողովորդի մեջ արժատացած կարծիքով, չպահի մասնակցի հասարակական պաշտոնների վարմանը»<sup>6</sup>: Ղավիթ Արքայազնի «Տեսության» այդ հոդվածը նկատի ունենալով, Շ. Մեսիխան նման վերաբերմունքը հայերի նկատմամբ բացատրում է դասակարգային պայքարի առկայությամբ, թեև ստիպված է արձանագրել նաև, թե նման վերաբերմունքի ձևակորման գործում, անհրաժեշտ ենք գտնում ընդգծել նաև, որ այդ վերաբերմունքը տարածվում էր հայազգի սոցիալական բոլոր շերտերի վրա՝ ընդգրկելով հայ հասարակությունը իր ամրողցության մեջ՝ դեռևս աստորադրյալ իրավական կարգավիճակներում: Անշուշտ առկա էր նաև պայքար ավատատերների և թագավորական իշխանության միջև, որով և կարող էր բացատրվել հայերի՝ որպես թագավորական իշխանության հենարանի, նկատմամբ վերաբերմունքը, որը ստանում էր նաև ազգային երանգավորում:

832-րդ հոդվածով արձանագրվում է, թե «վաճառականական գործունեությունը իր առևտրական շրջանառությամբ մյուսներից առավել կարող է ծեղք բերել կապիտալներ և քաղաքներում ավելի մեծ օգուտներ, և անբողջը, ժառանգների բացակայության դեպքում, ըստ պետական կարգի, պատկանում է թագավորին: Որպես զի պետական ունեցվածքը չանցնի մասնավորի ծեղքը, առանց թագավորի բոլոյտ վության կալվածատերներին արգելվում է վաճառականների այրիներին ամուսնացնել իրենց ճորտերի հետ: Հակառակ դեպքում, կալվածատիրոջ կողմից ամուսնացնողը պետք է ազատվի և ընդգրկվի վաճառականական դասի մեջ»<sup>7</sup>:

Հայազգի բնակչությունը նշանակալից թիվ էր կազմում ոչ միայն գյուղական բնակչության մեջ (առանձնապես հայկական գավառներում), այլև ներկայացված էր նաև վրաց ազնվականության և իշխանական դասի մեջ: Հայ բնակչությունը կազմում էր Վրաստանի առևտրա-արհեստագործական դասի գերակշիռ մասը՝ սոցիալական առումով գտնվելով ճորտական կախման մեջ վրաց և հայազգի պատաժերից:

Վրաստանում XVIII դարում դեռևս պահպանվում էր գյուղական համայնքը, որը պարտավոր էր հարկերը վճարել համայնքում գրանցված բոլոր անդամների, այդ բուում նաև համայնքից տարբեր ուղիներով հեռացած անդամների փոխարեն: Պահպանվել են խոսուն վավերագրեր՝ խնդրագրեր գյուղական համայնքի անունից, որտեղ առաջարկներ են ներկայացվում ավատատիրոջ՝ իրենց հարկերի չափերով վերանայելու մասին՝ ելենով բնակչության հրականում առկա թվաքանակից: Գյուղացիները հաճախ իրենք էին ճշտում և իշխանություններին տեղեկություններ հաղորդում փախած գյուղացիների գտնվելու վայրի վերաբերյալ:

Հայազգի բնակչությունը վրաց ազնվականության կողմից պարտադրվող ճորտական կախմանից խուսափելու համար երբեմն նախընտրում էր էջմիածնահպատակ ճորտ ներկայանալու ուղինք: Էջմիածնի ճորտ էին գրվում անգամ այլոց ճորտությունից ազատագրվելուց հետո՝ նոր պարտադրանքների ենթակվելուց խուսափելու նպատակով: Այսպես, օրինակ, Ղուկաս կաթողիկոսի դիվանում արձանագրված էր, թե «Գ/3 ոմանք յայլոց ճորտութենէ ազատեցնեալք, հանդերձ տամքը

իւրեանց, զդաշնագիրս էին յոթեալ և զօրտական քուղբս էին խնդրեալ ի սրբազն վեհեն՝ առ ի լինիլ ծառայս սրբոյ Աթոռոյս յորդոց յորդիս: Առ որս գրեաց սրբազն Վեհեն զքուղբս ճորտութեան»(1781թ. հուլիս)<sup>10</sup>: Եջմիածնի ճորտագրումը երբեմն օգտագործվում էր անգամ որպես միջոց հետազայում ճորտությունից ազատվելու համար<sup>11</sup>:

1790 թ. ապրիլի 15-ի կոնդակով Ղուկաս կաթողիկոսը հավաստում է Թիֆլիսում 7 տարի բնակվող կարնեցի Մուրատի որդի Մովսեսին Եջմիածնի ճորտ ընդունելու փաստը: Կոնդակում նշվում է Մովսեսի «ինքնայօժար կամօքն իւրովք» ճորտագրման համգամանքը և արձանագրվում, թե «ահա զայս օրինութեան եւ հաստատութեան նամակս առ քեզ գրեցար ի միամտութիւն քեզ, որպեսզի ունիցիս զսա ի ծեռին քում նշան եւ կնիք հաստատութեան ի Սրբոյ Արոռոյս վասն ճորտութեանդ եւ յատկապէս ծառայութեանը քոյ, զոր առնելոց ես սմա: Զի մի որ իշխանցէլ այսուհետեւ գրան ինչ ունիլ ընդ քեզ, եւ կամ զիր ինչ պահանջել ի քեն՝ արտաքրյ կամոնաց Սրբոյ Արոռոյս ճորտիցն, յորոց ոչ է օրէն պահանջել ինչ ումեք, որպէս է սովորութիւն ի բնէ անտի հաստատեցեալ արքունական թղթով: Որ եւ այսու կանոնաւ ոչ ումեք գոյ իշխանութիւն ի քեն իր ինչ պահանջելոյ, զի դու Սրբոյ Արոռոյս ես ճորտ եւ յատուկ ծառայ: Վասն որոյ զամենայն ճորտական տուրսո, թե հարկ եւ թէ նաքս, բոլորապէս պարտիս Սրբոյ Արոռոյս հասուցանել՝ ձեռամբ ի Սրբոյ Արոռոյս յայդր նստող առաջնորդին»<sup>12</sup>:

Առաջեցրած պատճենը կազմված է այս հանգամանքը, որ նամակի մեջ գրված ապա և ջնջված է հետևյալ նախադասությունը. «Ընդ այս դժկամ եղեալ այլոց ունանց արդ ես արարեալ քրիստոսազօր արքային եւ նորին բարձր իրանանաւն զբեզ հաստատեալ եւ ի ճորտութիւն Սրբոյ Աթոռոյ»<sup>13</sup>:

Թագավորական իշխանությունը երկրում առավել ուժեղն ու զսպիչն էր տեղական ֆեռղալական կամայականությունները հաղթահարելու և հասարակական համաձայնություն ստեղծելու գործում։ Ունենալու համար թագավորական գերդաստանի հովանավորությունը, հայ բնակչությունը իր իիմնական ճասով, այնուամենայնիվ, նախընտրում էր արքունի ծորտության կարգավիճակը՝ դրանով իսկ վերածվելով նաև թագավորական իշխանության հենարանի ու պաշտպանի։ Աստիճանաբար սերտաճելով վրաց ավատատիրական հասարակության մեջ, հայ բնակչությունը իր ազգային դիմագիծը պահպանելու համար դիմում էր առավելապես դավանական համախմբման միջոցին՝ կազմելով Հաղբատի հոգեստը թենք։ Վրաստանում հայ բնակչությունը ենթարկվում էր կամ ուղղակի Եջմիածնի Սայր Աթոռին և ներկայանում Հաղբատից առանձին համայնք, և կամ մասամբ ընդգրկված էր Հաղբատի թեմի մեջ՝ որպես «Վրաստանի լիիրավ» բնակիչ։ Բնականաբար, Հայոց կաթողիկոսները ծգտում էին հնարավորինս ընդդիմանալ նաև ծգտումներին ու քաղաքանությանը։

Վրաստանի գրեթե ամբողջ ներքին և արտաքին առևտութիւն մեջ լիովին ունենալով գերակշիռ վիճակ ու իր տնտեսական գործունեության մեջ վայելելով քաջազորի հովանավորությունը, հայ բնակչությունն իր ամբողջության մեջ, սակայն, չուներ որոշակի հրավական արտօնություններ, որպիսիք գյուղական ունենակ, Ռուսաստանում: Ետարբերություն Ռուսաստանի, Վրաստանում ճորտագրումը պարտադիր պայման էր և ուներ համատարած բնույթ: Վրաց արքունիքում ծառայության անցած հայազգի գործիչները ստիպված էին էջմիածնի նկատմամբ որդեգրել այնպիսի քայլաքանակություն ու վերաբերմունք, որն ուղղակիորեն թելադրում էր Վրաց արքունիքի կողմից: Հաճախ հայազգի գործիչները, որ պաշտօնի բերումով մեծ ազդեցություն էին ծեռք բերել վիրահայոց միջավայրում և մասնավորապես Թիֆլիսի հայոց մեջ, հաճախ հակամարտության մեջ էին հայտնվում էջմիածնական գործիչների հետ իրենց փոխհարաբերություններում: Էջմիածնի հետ հար-

բերություններում առավել անկաշկանդ վերաբերմունք էր պահանջում Սիմեոն Երևանցին, օրինակ, Թթիկիսիի մելիք Ավետիքից և նախառում նրան՝ իր վերաբերմունքը «հիմնավորող» պատճառաբանությունների համար. «Դու ևս եթե զբնական կարգն պահեսցես, արքայն քեզ զի՞նչ է ասելոց»: Սիմեոն Երևանցին նույն նամակում պահանջում է այլևս «չառնել այնպէս և հարազատ լինիլ սրբոյ Արռողյու»<sup>14</sup>: Նամակում ուշագրավ է ոչ միայն Սիմեոն Երևանցու կողմից մելիք Ավետիքին ուղղված նախատինքը՝ հայոց կաթողիկոսին ուղղած իր նամակը վրացերեն գրելու համար, այլևս համառոտագրման մեջ եղած նշումը այն մասին, թե «Քանզի և օգուտ իսկ էր սամ գանգատելը մեր Արքային զինքենէ», այսինքն՝ Դայոց կաթողիկոսի ղժգոհությունը մելիք Ավետիքից վրաց արքայի մոտ կարող էր բարձրագոնել մեյիրի մառևանիցոն<sup>15</sup>:

1780 թ. Թիֆլիսում հիշվում են Երկու մելիքներ՝ Ավետիքը և Մկրտչում Թաղոյանը<sup>16</sup>. Թեև Ավետիքը ևս կրում էր այդ տիտղոսը, իրականում մելիքի պաշտոնը վարում և պարտականությունները իրականացնում էր Մկրտչում Թաղոյանը<sup>17</sup>: Յայոց Դուկաս կաթողիկոսի նամակի վերաշարադրանքից պարզվում է, որ կաթողիկոսը նամակ է գրել մելիք Մկրտչում Թաղոյանին «ի պատասխանի նորին շնորհաւորական և որպիսածնոյց բրոյն»: Կաթողիկոսը «նախ սէր և զջնորհակալութիւնս գրեաց հանդերձ յորդորմամբ ի հարազատութիւն Սրբոյ Առողջութեան ապա, զի ի ճորտիցն Սրբոյ Առողջութեան զաւելի հարկս պահանջէին, գորս այժմ ճորտըն գրեալ էին սրբազն Վկիին, վասն որոյ գրեաց սմա, թէ դու գիտես, որ ի թն մեր ճորտըն ազատ են եղեալ՝ ըստ այլ եկեղեցեաց ճորտացն: Իսկ յետոյ ի մելիքութեան պարոն Աւետիքին քաղաքացիոր յիւրեանց միջն մի կերպ հարկ են կարգեալ ի վերայ մեր ճորտացն, իբր թէ որքան խարծ որ թուզի առնեն ի վերայ քաղաքի ամ յամէ, ի մի հարիւր թուման թուզումն Ե/5/ հազարորդն տացեն մեր ճորտըն: Զոր և նորա առանց արքային ազդելոյ և ի Սուլը Առողջ գրելոյ մինչև ցայժմ տուեալ են: Իսկ այժմ լսեմք, թէ քան զայս ևս առաւել աւելի առնուք, նաև ի դաւթարս ձեր արկանել ևս կամիք և ըստ հասարակ քաղաքացոցդ կարգելի ներքոյ հարլիք: Արդ, այդ չեղած քանճդ, որք մինչև ցայժմ չեն եղեալ, յաւուրս ձեր ընդէ՞ր լինին: Յետոյ թէ կամիք զայս բոլոր իշխանաց գրել, այլ այժմ թեզ միայն գրեցի, գիտելով, թէ դու խափանել կարես, վասն որոյ պարտիս զայդ վատ բանոյ խափանել: Եւ թէ եթ կարես այնպէս սահմանել, որ բուն առաջին կանոնաւն մեր ճորտըն ազատ լինին, յոյժ քարուք է: Ապա թէ ոչ, գոնէ այնպէս սահմանեսեն, որ ի մի հարիւր թուման թուզումն ԵՌ-ին / 5000/ տացեն որպէս ի մելիքութեան Սէլիք Աւետիքին եղեալ է»<sup>18</sup>: Մկրտչում Թաղոյանի մահից հետո Թիֆլիսի մելիքի պաշտոնը 1782 թ. կրկին անցնում է Սէլիք Ավետիքին<sup>19</sup>:

Անգամ XIX դարում, երբ Վրաստանում, և մասնավորապես Թիֆլիսում, անհամեմատ բարենպաստ վիճակ էր ստեղծվել հայերի համեմատաբար անկաշկանդ գործունեության համար, Վիրահայոց առաջնորդ նշանակված գործիչները կուկին հանդիպում էին խոշոնդումների: Այսպես, օրինակ՝ Ներսես Աշտարակեցին ևս գիտեր, որ Թիֆլիսի հայ առաջնորդներից «այլքն ևս այլովք դառնութեամբք են զեւանս իւրեանց անցուցեալք»<sup>20</sup>: Դայոց դավանական և ազգային պատկանելության դեմ անհանդուրժողականության դրսևորման մասին վկայող ակնառու փաստ է ոչ միայն Անտոն կարողիկոսի հեղինակած «Սպամետղվելոքա» (Պատրաստախոս) աշխատությունը, այլև ուն Թամազի բողոքագիրը տուգանքի մասին (Դերակլ II-ի Վծոռվ): Ահա այն. «Երջանիկ տիրակալի ցավը բող Աստված գորեցի Ամիլախորի մոտ ապաստանած մէջիբ թամազին տա: Ես բնիկ իմերեքից եմ, տաս տարեկան հասակում հայուինձ վաճառել էր Ախալցխայում մի թաթարի, թաթարից ինձ փրկագնել է մի ֆռանկ և մէծացրել իր դավանանքով որպես ֆռանկ: Այնուհետև նա ինձ ազատել է: Ես եկել եմ Քարքի և Քոցիխնվալում ֆռանկ կին եմ առել, սակայն այն ժամանակ, քանի որ պատերները գտնվում էին աքսորում, ինձ պսակադրեց հայոց տերտերը: Նրանից

իետո ես գտնվում եմ Գորիխում և ֆռամկ դավանանքի եմ: Թեյմուրազ դիվանբեգը և Սուլիխան մոհվանը այժմ երկիցս ինձ սաստիկ ծեծեցին և տուգանք են պահանջում, թե ի հայն է քեզ պսակադրել: Բազմազավակ, աղքատ մարդ եմ, ի վիճակի չեմ, թողություն ողորմացեք»:

Սեպտեմբերի 1, քրոնիկոնի ՈւՅԹ (1775)...

«[Յերակի վժիոր] Մդիվանքեց թեյմուրազ, քանի որ այս մարդը Ամիլախորի ծորտն է, սրամից տուգանը մի պահանջիր: Պարզվում է, մի չքավոր մարդ է: Եթե ուրիշ որևէ մեկը նրա հետ խոսր ու գրուց ունենա, թող հայտնի ինձ: Սեպտեմբերի 3-ի վեռո, օրոնմելով ՈւՅՑ (1775):

Սրանց գործը այս կարգով էր, որ Վճռվեց: Նրան տուգանք չնշանակվեց». [Տերակի կնիքը]<sup>21</sup>:

Հերակլ II-ի կողմից Վրաստանում նոր տպարան ստեղծելու համար պայմանագրով Կ.Պոլսից Թիֆլիս ժամանած Պողոս Շովիաննիսյան-Արաբյանը, որ անձանք պաշտպանված էր թագավորի կողմից հրավիրված լինելու հանգանանքով, 1780-1783թ., ի մոտո ծանոթանալով Թիֆլիսում տիրող իրավիճակին, 1782 թ. ապրիլի 10-ին գրած նամակով նախատում է իր եղբօրը, որ վաստակի համար ցանկություն էր հայտնել գալու Թիֆլիս: Նա գրում է, թե Թիֆլիսը փող վաստակելու վայր չէ, և արգելում է նրան գալ Թիֆլիս: «Յարութիւն տեղի ծանր նստ...այ իհմարք, այ տգետք, ամեն բանն չի գրուիր, մտքերնիդ ու՞՞ է, չեմ գիտեր», և որպես հիմնավորում հայտառ թուրքերենով մեզ է բերում թևավոր դարձած մի արտահայտություն: «Վախ, տեմիշշեր քի «Թիֆլիզ կիտրսէն, ելենմէ, ելենիրսէն էվլենմէ, էվլենիրսէն քարունա իքի ելի այրլաննա և այլն», Ե իմացա՞ր մի այժմ, բանին ու՞՞ կայանալն, պաշն դաշտան դաշա վուրմահնձ՝ քատօր պիլինմեզ, ահա ասելիքս ասի և վճարեցի, այժմ դու գիտես...»<sup>22</sup> (քարգմանաբար՝ «Զուր չէ, որ ասում են, Թիֆլիս գնաս կանգ չառնես, կանգ առար չամուսնանաս, ամուսնացար ողնիզոն երկու քալլ չերանապ»):

Այսպիսով, Վերոբերյալից ակնհայտ է, որ հայազգի բնակչությունը մեծ ավանդ ունենալով Կրաքագիության տնտեսական<sup>23</sup> ու մշակութային<sup>24</sup> զարգացման մեջ և կազմելով բնակչության նշանակալի տոկոսը<sup>25</sup>, սեփական ազգային զարգացման խնդրում ունեցել է լուրջ դժվարություններ և իրավական առումով՝ ոչ համարժեք կարգավիճակ:

Գրականություն

- 1 3. 7. **Φωικφαρμάζη**, Πιαγιαρέντερή αρχαιοτητεράνης ήσηρε Αριτεύαν Ρωμαϊκων περιοχών 16-18-  
ητη ηγ. Και σε υπότιμων Κοινωνίης ήρων φαρμάζη, - «Εξέτρη ήσηρε ο θεός Πολυφύλακας της Ρωμαϊκής Αρχαιότητας» (Ηοηκφαρμάζης θεοηκφαρμάζου), Ερικαν, 1971, τρ 127-128:  
2 Συντ. ψαθηψανψαδό γωνικέντηρης μεταψη, ένωνται ρήψερ ικανότητας ήτη 79 Φερητησιανα: Στέν  
ΑΚΑΚ, XII, Τιφλις, 1904, c. 226-227: Κερηθηνη ήρωατηρακηποτερηνέρ ιπέν Ο. Καραψετ-  
ιαν, Θηβηληψη ρωτηραφαρηποτερηνέρ, Ερικαν, 2003, τρ 7:

<sup>3</sup> ქართული სამართლის ძეგლები, VII, გამოხკა ი. დოდონიძემ, თბ., 1981.

<sup>4</sup> დაკით ბაგრატიონი, ხაქართველოს ხამართლისა და ქანონმდებრების მიმღებილი. აპილონ როგორც რედაქტორი და გამოკვლევითი, , თბილისი, 1959, გვ. 241. ზამნეა- სტილუმ ხამარი იცავდოს ეს ხავით ხელშეკრულება. «118. მილეტენი ის მარანნერები დამ- ყის ეს ხილადი იმპერიუმამ և ანასანაუკანისამ: ისნენ ჩრდნენ ჩავისნენერნ ის სხვა კან აუკანერებ ს აუტომანერებ, ირინე ხასთათვის ეს მადავი ჩილები: სრანე კრის ეს რელი აუტოსტილენერებ ს ხარები ს, დას ხასთათვის კარაფ, ნერ- კაუანის ეს არმონა ძალია ისტეუან ხამარი ეს ნერა კან ანდან: სრანე აუ- სტილუმ ეს [არმონ] დანდარამინ, კადმის ეს ცრავა კან მადავი რამა კან

ընտանիքի անդամների կալվածային տիրույթները, իսկ ոմանք իշխանական և ազն-վականական են» (Նույն տեղում, էջ 242):

- 5 քաջօտ ձագրացիոնո. և այլարտցելու և սամարտությունների մոմենտում:  
զգ. 311.

6 դաշտ ձագրացիոնո. և այլարտցելու և սամարտությունների մոմենտում:  
զգ. 330.

7 Մոմենտ մը ենթած. և առաջարկություն մը պատճենություն է 1982, զգ. 398-399.

8 դաշտ ձագրացիոնո. և այլարտցելու և սամարտությունների մոմենտում:  
էջ 358: Անհրաժեշտ է նկատել, որ Ղավիթ Արքայազնի ուսումնասիրությունները չունեն հետադարձ կիրառություն, ուստի չի կարենի դրանք վիրահայոց կյանքի ելակետ ընդունել:

9 Ղիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, հատոր Բ, 1786-1792, Աշխատասիրությամբ Վարդան Գրիգորյանի, Երևան, 2003, էջ XCV, 255, 531- 532:

0 Ղիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք առաջին., հատոր Ա, էջ 255 - 256:

1 ՍՍ, կաք., ղիվան, թղթ. 124, վավ. 368, թ. 30: Յրատարակությունը տես «Документы и материалы по истории армянского народа». Социально-политическое и экономическое положение Восточной Армении после присоединения к России /1830-1870/. Под редакцией проф. Н. А. Тавакяна, Ереван, Изд. АН Армении, 1993, с. 216-217.

2 Ղիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք առաջին. Ղուկաս Կարնեցի, հատոր Բ, 1786-1792, էջ XCV, 531-532:

3 Նույն տեղում, էջ 531:

4 Սիմեոն Երևանցու ակնարկած «չառնել այնպես»-ը մատնացուցում է նելիքի կողմից կատարած մի քայլ, որից նա ետ էր կանգնել և Յայոց կարողիկոսը պահանջում է այլևս նման քայլի չոփնել: Էջմիածնի համար առավել անհանդուրթելի և դատապարտելի էր դավանափոխության փորձը, ինչի մասին կան որոշ վկայություններ և, ամենայն հավանականությամբ, այդ է պատճառը, որ «Էջմիածնի նվիրակ Զաքարիա արքեպիսկոպոսը ստիպված է եղել բանադրել Մելիք Աղային և փախչել Թիֆլիսից» (Ամենայն հայոց կարողիկոսությունը և Կովկասի հայր XIX դարում, մասն Ա (1800-1832 թթ.), Աշխատասիրեաց Ալեքսանդր Դ. Երիցեանց, Թիֆլիս, 1894, էջ 97): Մելիք անվանումը տվյալ դեպքում չի ենթադրում Թիֆլիսի նելիքի պաշտոնում գտնվելու հանգամանք, այլ՝ պատվանուն: Այդ հատակ է Սիմեոն Երևանցու 1766թ. գրված մի նամակից, որտեղ ասվում է. «Առ միրիշքեարքաշի Մելիք Աղայն յանձնարարութիւն վասն Զաքարիա վարդապետին և պատուիր որդույն նորին՝ Աւետիքին՝ մնալ միշտ հարազատ Սրբոյ Արոռոյու» (Ղիւան հայոց պատմութեան, հ. 4, Սիմեոն Երևանցու Յշշատակարանը, հրատարակեց Գիւտ քահ. Աղանեանց, Թիֆլիս, 1894, էջ 534): Պաշտոնը, տվյալ դեպքում, «միրիշքեարքա բաշի» լինելը էր (որսապետ):

5 ՍՍ, ծեռ. 4479, թ. 194-195:

6 Ղիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք առաջին, էջ 127:

7 Մելիք Ակրտումը մահացել էր 1781 թ. տես Ղիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք առաջին., հատոր Ա, էջ 257:

8 Ղիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, հատոր Ա, էջ 127:

9 Մելիք Ավետիքին ուղղված քուղը, տես Ղիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, հատոր Ա, էջ 296-297:

0 Նույն տեղում, էջ 98:

11 Ժարտցելու և սամարտություն մը զցցլցծո, VII, զամուեցա ո. քուղում, տօ., 1981, զգ. 305-306, Բնագիր:

22 Կենտակ-Աղազար, ծեռ. 2690, թ. 15ա:

23 Վ. Մարտիրոսյան, Յայերի առևտորական գործունեությունը Քարթ-Կախերի բաշ-

գավորությունում (XVIII դ. Երկրորդ կես).- «Լրաբեր հասարակական գիտությունների», 1974, թիվ 11, էջ 65-70: Նույնի, Դայերը Թարթլ-Կախեթի տնտեսական կյանքում (XVIII դ. Երկրորդ կես).- «Լրաբեր հասարակական գիտությունների», 1976, թիվ 11, էջ 20-26:

24. *Ա. Մ. Միրզյան*. Արմանո-ցրացին լաւագույն համապատակաց համապատական գիտությունների մասին. Երևան, 1966.

25. *Վ. Սարտիրոսյան*, Վրաստանի հայոց թվաքանակը XVIII դարում.- ՊԲՀ, 2001, թիվ 2, էջ 164-168: